

## ՍԵՂՄԱԳԻՐ

### Արդարադատության նախարարության կողմից 2019 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ

- Մշակվել է Մարդու իրավունքների պաշտպանության նոր ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022թթ. միջոցառումների ծրագիրը, որը 2019թ. դեկտեմբերի 26-ին հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:
- Մշակվել են 37 իրավական ակտերի նախագծեր, այդ թվում՝ մշակվել է **«Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին»** ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը հաստատվել է 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N1141-Լ որոշմամբ:
- Մշակվել է **«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին»** և **«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը**, որը 2019 թվականի դեկտեմբերի 11-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ ազգային ժողովի կողմից:
- Մշակվել և 2019 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել **«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթը:**
- Իրականացվել են **«Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2019-2021թթ. ազգային ռազմավարության», «Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ռազմավարության», «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայի իրականացմանն ուղղված միջոցառումներ:**
- ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել, շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների հետ քննարկումների արդյունքում լրամշակվել և 2019 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել **«Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:** Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախանշվել են կոռուպցայի դեմ պայքարի ոլորտում Կառավարության առաջիկա 3 տարիների գործունեության ուղղությունները և դրանց կիրառման համար անհրաժեշտ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը:
- **«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում նոյեմբերի վերջին ձևավորվել է Կոռուպցիայի կանխարգելման**

**հանձնաժողովը**, որը հանդիսանում է կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացման հարցերով իրավասու ինքնավար մարմին:

- 2019 թվականի նոյեմբերի 28-ին ընդունվել է Կառավարության «**Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին**» N 1717-Լ որոշումը:
- Մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է ամբողջությամբ վերափոխել հայտարարագրման համակարգը, ընդլայնել հայտարարագրման բովանդակությունը և հայտարարատուների շրջանակը, ներդնել ծախսերի հայտարարագրման և իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու ինստիտուտներ:
- Մշակվել, շահագրգիռ կողմերի հետ քննարկվել և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի նիստում հավանության են արժանացել «**Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին**» օրենքի և **հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումների կատարելու մասին օրենքների նախագծերը**:
- Շրջանառության մեջ են դրվել **ՀՀ քրեական, քրեական դատավարության և քրեակատարողական օրենսգրքերի նախագծերը**:
- 2008 թվականի մարտի 1-2-ը տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ ստացած վնասվածքի պատճառով զոհված (մահացած) անձի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով իրավահաջորդի կարգավիճակ ունեցող անձանց, առողջության ծանր կամ միջին ծանրության վնասվածք հասցված անձանց դիմումների հիման վրա կայացվել է 72 որոշում:
- ՀՀ Վարչապետին է ներկայացվել միջազգային պայմանագրի կնքման (դրան միանալու) վերաբերյալ 15 առաջարկություն («**Միջազգային պայմանագրերի մասին**» **ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մաս**), տրամադրվել է ստորագրված միջազգային պայմանագրերի վավերացման կամ հաստատման նպատակահարմարության վերաբերյալ 19 հիմնավորում («**ՀՀ միջազգային պայմանագրերի մասին**» **ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներ**):
- ԵՄ հետ բանակցությունների ընթացքում է արդարադատության ոլորտին տրամադրվող հետագա աջակության փաթեթը, որը նախատեսվում է իրականացնել **բյուջետային աջակցության ձևաչափով և որպես հիմնական ոլորտային թիրախներ ընդգրկելու է դատախրավական ոլորտի բարեփոխումները՝ ներառյալ հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը**:
- ԵՄ հետ 2 շրջանակային ծրագրերի միջոցով աջակցություն է տրամադրվել դատախրավական ոլորտի բարեփոխումների ռազմավարության մշակմանն ու հատկապես ֆինանսական ծախսերի հաշվարկին, ինչպես նաև էլեկտրոնային արդարադատության հիմնական շրջանակի ձևավորմանը: